



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական յործ N 1252/02/14թ.

Քաղաքացիական յործ N 1252/02/14թ.

Նախագահող դատավոր՝ Հ. Գրիգորյան
Դատավորներ՝ Հ. Աբրահամյան
Ն. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

9 ապրիլի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ.Հովսեփյանի
դատավորներ՝ Ա.Աբրահամյանի
Ա.Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ <<Ջրային տնտեսություն>> փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Արարատ Վլադիմիրի Բաղրյանի՝ 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. փետրվարի 2-ի որոշման դեմ պատասխանող Արարատ Վլադիմիրի Բաղրյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Երվանդի Ավանեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

2014թ. հունիսի 25-ին <<Ջրային տնտեսություն>> փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Արարատ Վլադիմիրի Բաղրյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/՝ 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու մասին պահանջով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ նաև Դատարան/ 2014թ. նոյեմբերի 19-ի վճռով հայցը մերժվել է՝ որպես անհիմն:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015թ. փետրվարի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014թ. նոյեմբերի 9-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել ու հայցապահանջը բավարարվել:

Արարատ Վլադիմիրի Բաղրյանից հոգուտ <<Ջրային տնտեսություն>> փակ բաժնետիրական ընկերության բռնագանձվել է 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ռոտզման ջրի արժեքի գումար:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել պատասխանող Արարատ Վլադիմիրի Բաղրյանը և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Երվանդի Ավանեսյանը:

Գերագույն դատարանի 2015թ. մարտի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխանը դատական կազմին է հանձնվել դատական քննության ավարտից հետո՝ 2015թ. ապրիլի 10-ին, ուստի այն առանց քննարկման կցվել է սույն քաղաքացիական գործին:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը՝ հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձինք գտնում են՝ որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներ, որոնք արտահայտվել են նրանում, որ Դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 333-334-րդ և 437-րդ հոդվածների, ԼՂՀ ջրային օրենսգրքի 73-րդ, 113-րդ հոդվածների և ԼՂՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 16-ի <<Ռոտզման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ռոտզման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին>> որոշման պահանջները:

Նշված պնդումը բողոք բերողները հիմնավորում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիական գործը վերաբերում է ջրամատակարարման ոլորտում ծագած ջրային հարաբերություններին, իրենց խորը համոզմամբ պետք է կիրառեր ԼՂՀ ջրային օրենսգրքը ու այդ օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների հիման վրա ԼՂՀ կառավարության կողմից 2004թ. նոյեմբերի 16-ին ընդունված <<Ռոտզման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ռոտզման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին>> թիվ 438 որոշումը, ինչպես նաև դրանց հիման վրա կազմված ռոտզման ջրի մատակարարման պայմանագրերը և Դատարանի վճիռը թողներ անփոփոխ:

Նշելով, որ 2014թ. նոյեմբերի 19-ին Դատարանը բազմակողմանիորեն քննելով քաղաքացիական գործը, իրավացիորեն հայցը մերժել է՝ որպես անհիմն, ուստի իրենց կարծիքով գործը քննելու և վճիռ կայացնելու ժամանակ Դատարանը թույլ չի տվել որևէ դատավարական կամ նյութական նորմերի խախտումներ:

Քանի որ քաղաքացիական գործը վերաբերում էր ջրամատակարարման ոլորտում ծագած ջրային հարաբերություններին, Դատարանն արդարացիորեն տվյալ գործով կիրառելի է համարել ԼՂՀ ջրային օրենսգիրքը ու այդ օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների հիման վրա ԼՂՀ կառավարության կողմից 2004թ. նոյեմբերի 16-ին ընդունած «Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 438 որոշումը, ինչպես նաև դրանց հիման վրա կազմված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերը:

«Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 16-ին թիվ 438 որոշումը ԼՂՀ կառավարությունը հաստատել է ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները՝ համաձայն թիվ 1 հավելվածի, միաժամանակ սահմանելով նաև ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի: Սահմանվել են նաև ԼՂՀ ջրօգտագործողներին ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման օրինակելի պայմանագրի ձևը՝ համաձայն թիվ 3 հավելվածի: Շարադրելով ԼՂՀ ջրային օրենսգրքի 113-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի, իսկ 334-րդ հոդվածի 1-ին կետի նորմերի բովանդակությունը և գործարքների /պայմանագրերի/ անվավերության հետևանքները և նշելով, որ պատասխանողը իրականում ցանել է ոչ թե 30 հա եգիպտացորեն, այլ մոտ 12 հա, որը ապացուցվում է համապատասխան մասնագետների կողմից կազմված ակտով, իսկ հայցվորի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով պատասխանողը կրել է խոշոր չափերի՝ ավելի քան 1 մլն դրամ գումարի հասնող վնասներ, բողոքաբերողները գտնում են, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Բացի դրանից Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը արդեն իսկ պատասխանողի համար առաջացրել է ծանր հետևանքներ, քանի որ այդ պատճառով ընտանիքի անդամները հայտնվել են ծայրաստիճան վատ նյութական ապրելապայմաններում:

Բողոք բերող անձինք խնդրել են ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. փետրվարի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014թ. նոյեմբերի 19-ի վճռին:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատասխանողի կողմից 2011թ. ապրիլի 27-ին Հայցվորին ներկայացված «Ոռոգման ջրի մատակարարման» թիվ 175 հայտի հիման վրա, «Ջրային տնտեսություն» ՓԲ ընկերության /որպես Մատակարար/ և Արարատ Բաղրյանի /որպես Ջրօգտագործող/ միջև նույն օրը կնքվել է «Ոռոգման ջրի մատակարարման» թիվ 137 պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/:

Պայմանագրով Մատակարարը պարտավորվել է ռոռզման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների և Պայմանագրի անքակտելի մասը /թիվ 1 հավելվածը/ կազմող պլան-ժամանակացույցի համաձայն Ջրօգտագործողին մատակարարել ռոռզման ջուր, որի մեկ խոր/մ արժեքը կազմում է 2 /երկու/ ՀՀ դրամ, իսկ Ջրօգտագործողը պարտավորվել է ընդունել այն և սահմանված կարգով Մատակարարին վճարել ջրի վարձը:

2. 2011թ. ապրիլի 30-ի <<Ռոռզման ջրի հանձման-ընդունման>> ակտ-օրագրի համաձայն՝ 2011թ. ապրիլի 5-ից-30-ն ընկած ժամանակահատվածում Պատասխանողը Հայցվորից ստացել է 50,0 /հիսուն հազար/ խոր/մ ռոռզման ջուր, որի 1 խոր/մ սակագինը կազմում է 2 /երկու/ ՀՀ դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ: Նշված ակտ-օրագիրը ստորագրված է <<Ջրային տնտեսություն>> ՓԲ ընկերության տնօրենի, նույն ընկերության հիդրոտեղամասի պետի և Արարատ Բաղրյանի կողմից:

3. 2011թ. հուլիսի 25-ի <<Ռոռզման ջրի հանձման-ընդունման>> ակտ-օրագրի համաձայն՝ 2011թ. հուլիսի 1-ից-25-ն ընկած ժամանակահատվածում Պատասխանողը Հայցվորից ստացել է 150,0 /հարյուր հիսուն/ հազար խոր/մ ռոռզման ջուր, որի 1 խոր/մ սակագինը կազմում է 2 /երկու/ ՀՀ դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ: Նշված ակտ-օրագիրը ստորագրված է <<Ջրային տնտեսություն>> ՓԲ ընկերության տնօրենի, նույն ընկերության հիդրոտեղամասի պետի և Արարատ Բաղրյանի կողմից:

4. Դատարանի և Վերաքննիչ դատարանի դատաքննությունների ընթացքում Պատասխանողն ու նրա ներկայացուցիչը չեն վիճարկել վերոնշյալ ակտ-օրագրերը Պատասխանողի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

5. <<Ջրային տնտեսություն>> ՓԲ ընկերության տնօրենը Պատասխանողին հասցեագրված 2012թ. մարտի 28-ի թիվ 45 գրությամբ վերջինիս հայտնել էր, որ 2011թ. ժամանակաշրջանի համար օգտագործված ռոռզման ջրի դիմաց նրա պարտքի գումարը կազմում է 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը նա պարտավոր էր մարել մինչև 2011թ. օգոստոսի 10-ը:

6. Սույն գործով Պատասխանողը կրում է իր վկայակոչած փաստերի՝ իր կողմից ստորագրված վերոնշյալ ակտ-օրագրերով ստացված /ընդունված/ ընդհանուրը 200,0 /երկու հարյուր/ հազար խոր/մ ռոռզման ջուրը կամ դրա մի մասը Հայցվորի կողմից իրեն մատակարարված չլինելու ապացուցման պարտականությունը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով սույն բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով. ուստի, Գերագույն դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական խնդիրը՝ արդյո՞ք Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական օրենքի այնպիսի խախտում, որը հիմք է հանդիսանում վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Սույն գործով բողոքաբերները պնդում են, որ կնքված ջրամատակարարման պայմանագիրը անվավեր է, քանի որ չի համապատասխանում ԼՂՀ ջրային օրենսգրքի և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին, իսկ պատասխանողը փաստացի ոռոգման ջուր է օգտագործել միայն 10 հա ցորենի և 12 հա եգիպտացորենի հողատարածքները ջրելու համար, այլ ոչ թե պայմանագրով նախատեսված 30 հա եգիպտացորենի ցանքսի ոռոգման համար, այսինքն՝ օգտագործել է պայմանագրով նախատեսված քանակից զգալի քիչ ջուր, և քանի որ ջրամատակարար ընկերությունը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները՝ այդ իսկ պատճառով պատասխանողը կրել է նյութական վնասներ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասի՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում /ժամկետներում/ հանձնել գնորդին...

Նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն օրենսգրքի 534-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ մատակարարված ապրանքների համար գնորդը վճարում է՝ պահպանելով պայմանագրով նախատեսված հաշվարկների կարգը և ձևը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտվում է գործարքի բովանդակությանը և ստորագրված է գործարք կնքվող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից, երկկողմ /բազմակողմ/ գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու... միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրի կողմից:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ մատակարարման պայմանագիրը միջնորդավորում է ապրանքի հատուցելի փոխանցումը մեկ սուբյեկտից մեկ այլ սուբյեկտի: Այն երկկողմանի, հատուցելի պայմանագիր է ու ինչպես ցանկացած գրավոր պայմանագիր այնպես էլ մատակարարման պայմանագիրը պետք է կնքվի կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ կողմերի միջև կնքված պայմանագիրը համապատասխանում է օրենքի պահանջներին և չի կարող համարվել անվավեր:

Իսկ ինչ վերաբերում է մատակարարված ջրի քանակին, ապա գործում առկա բոլոր ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության արդյունքում Գերագույն դատարանը գտնում է, որ Հայցվորի կողմից պատասխանողին ընդհանուր 200 հազար խոր/մետր ծավալի և 400 հազար դրամ գումարի արժեքի ռոտզման ջուր մատակարարելու հանգամանքը հաստատվում է պատասխանողի կողմից ստորագրված՝ 2011թ. ապրիլի 30-ի և 2011թ. հուլիսի 25-ի «Ռոտզման գրի հանձման-ընդունման» ակտ-օրագրերով, որով իսկ հերքվում է պայմանագրով նախատեսված չափից զգալի քիչ ջուր ստանալու մասին պատասխանող կողմի անհիմն պատճառաբանությունները:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու գնահատման վրա, որոնք բավարար են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկներն անհիմն են, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների խախտման մասին բողոք բերողների պնդումները նույնպես անհիմն են: Հետևաբար Վերաքննիչ դատարանը իրավացիորեն է բեկանել դատարանի վճիռը, կայացնելով նոր դատական ակտ հայցը բավարարելու մասին, ուստի հիմքեր չկան որոշումը բեկանելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալները և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Արարատ Վլադիմիրի Բաղրյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Երվանդի Ավանեսյանի վճռաբեկ բողոքը մերժել՝ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. փետրվարի 2-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ